# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1.1 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/91**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար քարթրիջների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/91 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված հրավերի տեքստով ներկայացված տեխնիկական բնութագրում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություն:

**Փոփոխության նկարագրություն:** Տեխնիկական բնութագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ.

«HP Color LaserJet CP5225 տպիչի համար նախատեսված տոներ-քարթրիջների հավաքածու կամ հանդիսանա փոխարինող, որը պետք է ներառի՝ Սև գույնի տոներ-քարթրիջ՝ HP CE740A – 1 հատ, Կապույտ (Cyan) գույնի տոներ-քարթրիջ՝ HP CE741A – 1 հատ, Դեղին (Yellow) գույնի տոներ-քարթրիջ՝ HP CE742A – 1 հատ, Մանուշակագույն (Magenta) գույնի տոներ-քարթրիջ՝ HP CE743A – 1 հատ: Առաջարկվող տոներ-քարթրիջները պետք է լինեն նոր, նախկինում չօգտագործված, չվերալիցքավորված և գործարանային արտադրության: Քարթրիջները պետք է համատեղելի լինեն HP Color LaserJet CP5225 մոդելի տպիչի հետ և չպահանջեն որևէ լրացուցիչ ծրագրային կամ տեխնիկական միջամտություն դրանց շահագործման համար: Սև գույնի տոներ-քարթրիջի տպագրական ռեսուրսը պետք է կազմի առնվազն 13 000 էջ, իսկ մյուս գույների տպագրական ռեսուրսը՝ առնվազն 12 000 էջ 5% ծածկույթի պայմաններում կամ ISO/IEC 19798 ստանդարտին փորձարկման մեթոդաբանությամբ:»

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 13)
Էլ. Փոստ՝ a.hovhannisyan@promotion.am
Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ